Մրցույթի հայտարարություն

«Երևանի Դ. Հովսեփյանի անվան հ.191 հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Երևանի Դ. Հովսեփյանի անվան հ.191 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են «Երևանի Դ. Հովսեփյանի անվան հ.191 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2021 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} -ից մինչև ժամը14^{00}, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոն և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թվականի հունվարի 12-ին՝ ժամը 12^{00}-ին, Երևանի Դ. Հովսեփյանի անվան հ.191 հիմնական դպրոցում,որը գտնվում է Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի՝ Անդրանիկի 83 հասցեում::
Տեղեկությունների համար դիմել խորհրդի կողմից լիազորված անդամ՝ Անյուտա Ալեքսանյանին, հեռախոս՝ 099 72 52 77, էլեկտրոնային հասցե՝ dproc191@mail.ru: